



պրևի հիշյալ օկզրնադրությունների հարուստ հենքի վրա: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և հակիրճ վերջաբանից: Ընդարձակ ներածության մեջ լուսաբանվում են աղբյուրները՝ մատենագրությունը, վիժագրությունը, հնագիտությունը, ներկայացվում է նաև վայրում իրականացված ծավալուն պեղումների տրոփումները, բոտ արժանվում են գնահատելով հայագիտությունը մեծ նպաստ բերած յուրաքանչյուր հետազոտողի վաստակն ու ներդրումը:

Առաջին գլխում շոշափվում են բնակավայրի քաղաքական կյանքի պատմությունը, նյութական մշակույթի կոթողներին և տեղադրությանը վերաբերող հարցերը: Բավականին մանրամասն ու աչքողոված պիտի համարել գյուղաքաղաքի տարածքային սահմանների ու միջնադարյան հուշակոթողների ընտրությունը ու քննությունը (էջ 24—30): Ձևորի տակ ունենալով հողի տակից հանված ու կանգուն շուրջ 50 խաչքար, Հ. Պետրոսյանը կարողացել է ներկայացնել հուշակոթողների կիրառական նշանակությունը, արվեստագիտական ներուժյուններն ու արձանագրությունների առանձնահատկությունը, ապացուցելով սոսկ հայկական միջավայրին բնորոշ այդ մշակույթի և մի արևալի մասին: Անտիկ շրջանի կոթողների (հատկապես հեթանոսական տաճարի) դարգաբանականների մանրամասների քննությունը աշխատության մեջ թվում է, թե անհարկ է ընտրված թվային: Սակայն անտիկից վաղ միջնադարյան մշակույթի անցման օղակի առանձնահատկությունների բնկավմանը վերաբերող շատ նորը հարցը, որին բազմիցս անդրադարձել են հայ մշակույթի նվիրյալները (Տ. Իզմայլովա, Ալ. Յակոբսոն, Գ. Տիրացյան, Ա. Քալանթարյան), շարունակ նորանոր փաստարկումների և լրացումների կարոտ է, հանգամանք, որին հասել է Հ. Պետրոսյանը գիտական համառ որոշումների շնորհիվ (էջ 36): Երկրորդ գլխի ընդգրկում է նյութական մշակույթի բազմակողմանի քննությունը: Իհարկե, անառարկելի է նախորդ հետազոտողների (Բ. Առաքելյան, Գր. Կարախանյան) աշխատանքի նշանակությունը, որոնք ժամանակին ինչպես հարկն է արժեքավորել են հայտնաբերված գտածոները: Շեշտելով նրանց հիշյալ աշխատության կարևորությունը, Հ. Պետրոսյանը նորանոր նյութերի ընդգրկումով ամբողջացնում է Գառնիի միջնադարյան գյուղաքաղաքի պատմամշակութային պատկերը՝ ընդգծելով նրա դերն ու նշանակությունը հայկական միջավայրում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի խեցեղեն մշակույթին հատկացված բաժինը: Զափաղանց հագեցած նյութը հեղինակի կող-

մից դասդասված է որոշակի համոզողությամբ, հիմքում, իհարկե, նկատի ունենալով առաջին հերթին պատրաստման եղանակի սկզբունքները:

Ցուրաբանչյուր ամփոփ ոտորաբաժանում լուսաբանվում է նորովի: Այսպես, օրինակ, դասկարգ կարաաններն ուսումնասիրելիս աշխատասիրողը յուրովի մոտեցում ունի, այն է՝ դարգագոտաներում հանդիպող ոլորմաները լուսաբանել ոչ իրեն գիտարանական և հեթանոսական վերապրուկների արտահայտություն, այլ առաջին հերթին անմիջական կապ տեսնել հայ կենցաղավարության մեջ տարածված երևույթների, սովորույթների, դրամոսների մեջ, հետևաբար և արձագանքները փնտրել հայկական առականերում, ասածներում (խնջույթ, որս, սոցիալական իրավիճակ և այլն):

Մեծ խնամքով է մշակված հատկապես ցրնարական խեցեղենի այն բաժինը, որ վերաբերում է XIII—XIV դդ., մի ժամանակաշրջան, որ Մերձավոր Արևելքում նշանավոր էր արհեստագործության բնագավառում կատարված անխնդողական մեծ հեղաշրջումով և որից, հեղինակի արդարացի կարծիքով, բնականաբար, անմասն չէր կարող մնալ և Գառնի: Սոսկանցներով տեղական և ներմուծված խեցեղենը, աշխատանքում նախնական փորձեր են արված նոր խոսք ասելու անթմների հատակին հանդիպող դրոշմների մասին, մի հարց, որ փաստերի սակավության պատճառով տակավին սպասելի պատասխան չի ստանում:

Մի պատկանակի բաժին է հատկացված Գառնի գյուղաքաղաքի բնակչության մեկ այլ դրամոսներին՝ մետաղագործությանը: Բացառիկ էրև և բազմատեսակ նյութի իրավունք է վերապահել հեղինակին կրթականցելու, որ արհեստագործության այդ բնագավառը էական նշանակություն է ունեցել ինչ խաղաղ, թե՛ ռազմական պայմաններում: Այստեղ է մի են բերված բոլոր տեսակի առարկաները, բայց անհասկանալի է մնում, թե ինչու է հեղինակը սեականվորման հիմքում բնորոշում նյութը (բրոնզ, պղինձ, երկաթ): Զե՛ որ տարրեր նյութից միևնույն նպատակին ծառայող առարկաները՝ թեկուզ խաչերը, ռճական էական փոփոխություններ կրելով, կատարելագործվել են ժամանակի ընթացքում, հետևաբար ժամանակագրական շփոթը, որ նկատելի է այս բաժնում, բխում է տեսականվորման ոչ ճիշտ օկզդությունից: Ապակուց, ոսկրից և այլ նյութերից սպտրաստված առարկաները խմբավորված են շատ հանգամանալից և թնկված հայկական և օտար միջավայրի ընդհանուր ֆոնի վրա: Զետքի տակ եղած հարուստ արձանագրական նյութների շնորհիվ Գառնի գյուղաքաղաքի բնակչության զբաղմունքին և դրանից բխող ոտցիալ-

սնական հարաբերություններին վերաբերող կարևոր հարցերը հեղինակի կողմից խոր ուսումնասիրության են ենթարկված: Հարկային կամ զբաղմունքն արտահայտող բազմաթիվ վաճառականների բովանդակությունից պարզվում է, որ Գառնին, հատկապես XIII—XIV դդ. հոգահանգրով հարուստ մի գյուղաքաղաք էր, ուր հողը վարում էին վեցկիով, պարարտացնում գոմարով, իսկ ոռոգումը կատարում փողոված առուններով և ջրամբարներով (էջ 101—103): Սեցիալ-տնտեսական կյանքի բնորոշ կողմերն արտացոլող արձանագրությունների մեջ շոշափվում են հողահանգրների առուծախի, գրավ գնելու, նվիրատվությունների և վերջիններիս հետ կապված փոխհատուցումների տարածված երեւույթները (էջ 105): Նույն հարցի բաղադրամասը կազմող հարկերի, տուրքերի ծավալումն հանկի (վեցկու թաղար, կատնպանի հակին, դոսա, խարաշ, դամղա, բալխահարկ, կթանահարկ և այլ կարգի տուրքեր ու հարկեր) խոր ու բազմակողմանի վերլուծությունը հեղինակին հանգեցնում է այն եզրակացության, որ գյուղաքաղաքը առաջին հերթին երկրագործական, ապա անասնապահական և ի վերջո գյուղատնտեսական մթերքների վերամշակող կենտրոն (շաղաց, ձիթհան, հնձան) էր: Մենում է զարմանալ միայն, թե ինչու են հնձանների հետ արժարժեղ հարցերը տեղ գտնում ապրանքային և ներքին առևտրի բաժնում:

Աշխատության ամենաշագնիկ մասը Գառնին իրեն գյուղաքաղաք, վարչատնտեսական միավոր ներկայացնելու բաժինն է: Շատերն են անդրադարձել այդ կարևոր հարցին (Չ. Զորյան, Չ. Մանանդյան, Բ. Առաքելյան), բայց վիճաբանական հնազանդական, դեմոգրաֆիկ և այլ աղբյուրների ամբողջությամբ գյուղի և քաղաքի միջանկյալ օղակի վարչատնտեսական միավորի խոր և համակողմանի հետազոտությունը իրականացվել է գրախոսվող գրքում: Աշխատանքում ցույց է տրվում, թե ինչպիսի կարևորություն ունի միջնադարյան բազմաթիվ գյուղաքաղաքների (Անզղ, Արտաշատ, Արճեյ, Ավան, Բագարան, Արգինա, Գեթ, Շաղատ, Կողբ, Թալին, Արուհ, Եղեգիս, Շիրակալան, Աշնակ) տնտեսական, կառուցապատման ու բնակեցման, ներքին կառավարման շափանիշների առանձնահատկությունների առանձնափորձումը հայ ժողովրդի պատմության մոլթ էջերը լուսաբանելու համար: Հիշյալ հուշարձանները տակավին հնդիտական առանձնափորձում կարող են, լսյոյ մատենագրական

տվյալներով աշխատանքում ուրվագծվում են դրանց տնտեսության բնույթը, բնակչության կազմն ու կառուցապատման առանձնահատկությունները: Իրավացիորեն յուրաքանչյուր գյուղաքաղաքի տնտեսական շափանիշը համարվում է նրա տնտեսության բնույթը՝ երկրագործություն (Մրեն, Աշնակ), ձկնորսություն (Կոթ, Առնետալան), բնական հարստությունների արդյունահանում (Կողբ, աղ), այգեգործություն, ցորենի մշակություն, ձիթհանություն (Գառնի): Ի մի բերելով լրացուցիչ բոլոր աղբյուրները (մատենագիտություն, վիճագրություն), հեղինակը կարողացել է բնութագրել գյուղաքաղաքների կառուցապատման սկզբունքը (բերդ, շուրջը առանց պարիսպների բնակելի համալիր), տարածքային շափանիշները՝ Գառնի՝ 90—95 հա, Բագարան՝ 40—45 հա, բնակչության իրական կազմը՝ Մրեն 4 հաղ., Աշնակ՝ 5 հաղ. Թալին՝ 2700, Գառնի՝ 3 հաղ. և այլն, տանուտիրական խորհրդի կողմից կառավարվելու իրողությունը:

Գրախոսվող աշխատանքը գերծ լէ թերութիւններէ: Զի կարելի համաձայնել այն մտքին, թէ XV դարի հնագիտական շերտ չի վաճառացվել (էջ 10): XV դարից մեզ հասած արձանագրությունները (տե՛ս Բ. Ն. Առաքելյան, Գր. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 21) հավաստում են, որ Գառնին XV դարում բնակեցված էր. այլ հարց է, որ XIV դարից հետո գյուղաքաղաքը կորցնում է երկրագործական ու արհեստագործական մշակութային կենտրոնի իր դերը: Հաճախ ենք հանդիպում կրեմագայն օտարամուտ բառին, իսկ Կապաղաղը (էջ 42) հիշատակվում է Կապաղա ձևով:

Այս կարգի թերացումներով հանգերծ, գրախոսվող աշխատությունը, որ ներկայացված է հատուկ ու պարզ ոճով, կուռ շարադրանքով, դիտական լուրջ քրոնոմետրի արդյունք է և Հայաստանի միջնադարյան պատմության համար միանգամայն օգտակար ուսումնասիրություն: Աշխատության անհրաժեշտ և բաղկացուցիչ մասն են կազմում հատորին կցված լուսանկարները, գծանկարները, որոնք գյուղացնում են նյութի ընկալումը:

Մենում է միայն ասել, որ սոսկ մեկ գլուխղաքաղաքի պատմահնագիտական ուսումնասիրությամբ հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել այդ տիպի բնակավայրերի մասին, ուստի մնացած գյուղաքաղաքների լուսանկարները, որոնք սկսված են (Աշնակ, Արուհ), անհապաղ պետք է շարունակել:

Ա. Ս. ԺԱՄԿՈՋՅԱՆ